№ 76 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 7 **1892** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 7 № 76

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խօլէրայի բժշկութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Պաշտօնական տեղեկութիւններ խօլէրայի մասին. Վարակված իրերը. Բաղուի դրութիւնը. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ընտրութիւնները Անգլիայում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ.—ՏԵՂԵԿԱՑՈՅՑ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԽՕԼԷՐԱՅԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

—

Երբ Բաղուի մէջ յայտնվեց խօլէրան, մեր տեղական բժիշկները սկսեցին այլ և այլ խորհուրդներ տալ թէ ինչպէս պէտք է բժշկել խօլէրայից, ինչ միջոցներ պէտք է գործ դնել այդ հիւանդութեան առաջն առնելու համար։ Ի միջի այլոց նրանք միաձայն յայտնեցին որ խօլէրայի երևալուն պէս դեղթափ կամ լուծողական չը պէտք է ընդունել։ Այդ մտքին առաջին հակառակողը հանդիսացաւ Թիֆլիսի բժիշկ պ. Տէլաֆուս, որը յայտնեց տեղական մամուլի մէջ տպված իր մի յօդուածում թէ խօլէրայի նշանների երևալուն պէս պէտք է լուծողականն ընդունել, այն է Oleum Ricini (տգկահատի, գենադերչակի ձէթ) նախ խանգարված ստամոքսը մաքրելու համար և ապա միայն, երբ ստամոքսը կը մաքրվի՝ պէտք է ընդունել խօլէրայի դէմ միջոցներ, ինչպէս օպիում, ինօզէմցեվի կամ Հօֆմանեան կաթիլներ և այլն։ Պ. Տէլաֆուսի մտքի հետ համաձայնվեց և բժշկապետ Մալինին, նոյն հարցի մասին մի յօդուած տպագրելով տեղական ռուս լրագրում։

Մենք ուզում էինք արդէն այդ հարցի վրա մեր բժիշկների ուշադրութիւնը հրաւիրել և տպագրական խօսքի միջոցով առաջարկել նրանց վճռել այդ նշանաւոր տարաձայնութիւնը, որը հանդէս եկաւ խօլէրայի բժշկութեան ձևի մէջ։ Բայց ահա Պետերբուրգի „Новое Время“ լրագրում երևում է բժշկական աշխարհի մի այնպիսի մեծ հեղինակութեան յօդուածը խօլէրայի բժշկութեան մասին, որի հմտութեան և փորձառութեան առջև պիտի լռեն մեր փոքրիկ բժիշկները։ Մենք խօսում ենք հըռչակաւոր բժշկապետ, պրոֆէսօր, ծերունի Զդեկաուէրի գրուածքի մասին, որն այս օրերս տպագրվեց վերոյիշեալ լրագրում։ Զդեկաուէր նամանաւանդ այն կարծիքի է, որ խօլէրայի նշանների երևալուն պէս պէտք է նախ մաքրել ստամոքսը, լուծողական, այն է զենադերչակի ձէթն ընդունելով։

Ահա մօտաւորապէս ինչ է ասում հըռչակաւոր ուսումնականը, որը գործեց խօլէրային չորս էպիդէմիաների ժամանակ։ Զդեկաուէր կարծում է որ խօլէրայից առաջ եկող նշանաւոր մահացութիւնը (40% ից մինչև 60% հիւանդացողների) կախված է գլխաւորապէս այն հանգամանքից, որ ընդհանրապէս սկսում են բժշկել այդ հիւանդութիւնը, երբ նա արդէն իր վերջին աստիճանին է հասնում և ոչ թէ նրա սկզբնական դրութեան ժամանակ, կամ մարդկային կազմուածքի մէջ նրա երևալու րոպէին։ Հռչակաւոր բժշկապետը ասում է որ առհասարակ թէ բժիշկները և թէ ոչ-բժիշկները փորլուծութեան այն պէրիոդին են յատկացնում խօլէրա անունը, որն արդէն այդ հիւանդութեան վերջին ստադիումն է կազմում (Stadium algidum) որը մեծ մասամբ արդէն դժուարութեամբ է բժշկվում։ Այդ տեսակ հայեացք ծերունի պրոֆէսորը նախապաշարմունք է անուանում, և աւելացնում է որ ոչ մի հիւանդութեան վերաբերմամբ այդ տեսակ նախապաշարմունք դոյութիւն չունի։ Դժուար չէ համոզվել, որ խօլէրային էպիդէմիայի ժամանակ նախ առաջ է գալիս ստամոքսի խանգարումն և այն, որը շատ դիւրին է կարգի բերել բժշկական յայտնի միջոցներով։ Եւ ահա Զդեկաուէր ասում է, որ ստամոքսի այդ տեսակ խանգարումների ժամանակ պէտք է (նայելով խանգարման ձևին) կամ դեղթափ տալ հիւանդին (օրինակ Ipecacuanha), կամ լուծողական (Oleum Ricini)։ Ստամոքսը մաքրելուց յետոյ միայն պէտք է ընդունել տալ հիւանդին այլ և այլ հանգստանող միջոցներ, որը բժշկապետը ցոյց է տալիս իր յօդուածում, կամ բօտկինի ու ինօզէմցեվի կաթիլների պէս զրդռիչ միջոցներ։

Ապա բժշկապետն իր յօդուածում մանրամասնաբար խօսում է խօլէրայի բժշկութեան ձևի մասին, հիւանդի համար խիստ դիէտա պահելու անհրաժեշտութեան մասին, վերջապէս ընդհանուր միջոցների մասին, որ անհրաժեշտ է ձեռք առնել հողը, ջուրը և բնակարանները դեզինֆեկցիային ենթարկելու համար և առհասարակ այն հասարակական կազմակերպութեան մասին, որն անհրաժեշտ է զլուխ բերել խօլէրային էպիդէմիայի երևալու ժամանակ։ Զդեկաուէր վերջացնում է իր յօդուածը հետևեալ խօսքերով. „Ծածկել խօլէրայի երևալը, իբր թէ ազգաբնակութիւնը հանգստացնելու համար՝ ես համարում եմ մի յանցաւոր գործ։“

Թէ որքան գործնական են Զդեկաուէրի առաջարկած միջոցները խօլէրան բժշկելու, ցոյց են տալիս հետևեալ թուանշանները. 1848 թուի էպիդէմիայի ժամանակ հիւանդացողների, այսինքն փորլուծութեամբ հիւանդացածների թիւը Պետերբուրգում՝ 60,000 էր, որոնք բոլորն էլ այնուհետև հիւանդացան իսկական խօլէրայով. սրանցից կէսը, այսինքն 30,000 հոգի մեռան։ Իսկ 1866 թուի խօլէրայի ժամանակ, երբ մայրաքաղաքում գրեթէ նոյնչափ թուով փորլուծութեամբ հիւանդացածներ կային, դրանցից, այդ 60,000-ից, միայն քառորդ մասը, այսինքն 15,000 հոգի այնուհետև հիւանդացան բուն խօլէրայով, իսկ այս հիւանդացածներից միմիայն 5000 հոգի մեռան։

Ուրեմն 1848 թուին 60,000 հիւանդացածներից կէսը, այսինքն 30,000 հոգի մեռան, իսկ 1866 թուին, երբ խօլէրայի երևալու րոպէին սկսեցին դրական միջոցներ գործ դնել նախ փորլուծութեան դէմ, նոյն 60,000 հիւանդացածների թուից՝ միայն 5000 հոգի մեռան, ուրեմն 1848 թուի էպիդէմիայի հետ համեմատած՝ միայն 6-որդ մասը։

Դ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԷՐԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում յուլիսի 3-ին առաւօտեան խօլէրայով հիւանդներ կային՝ 19 տղամարդիկ և 1 կին, օրվայ ընթացքում հիւանդանոց մտան երկու տղամարդիկ՝ Կուրիկաշվիլի՝ Թամամշեվի ջրաղացից, 7-դ քաղաքամասում և Օբրուբով (Բաղուից եկած) «Նէապոլ» հիւրանոցից, 10-դ քաղաքամասում, և մէկ կին՝ Զէվարդօվա, Սաղի վրա գտնվող Սերգինի տանից, 8-դ քաղաքամասում։ Հիւանդանոցից դուրս եկան՝ երկու տղամարդիկ—Ռէվին և Զուբով և Տէր-Խաչատրեան ազգանունով մի կին. մեռան երկու տղամարդիկ—Կուրիկաշվիլի և Մակսիմով։ Երեկոյեան, յուլիսի 3-ին, երեկոյեան հիւանդանոցում մնացին խօլէրայով հիւանդներ ընդամենը 17 հոգի՝ 16 տղամարդիկ և 1 կին։ Յուլիսի 3-ի գիշերվայ ընթացքում հիւանդանոց մտան երկու տղամարդիկ—Զիդօկո-շվիլի՝ Պօպովի տնից № 154, Միքայէլեան փողոցի վրա, 10-դ քաղաքամասում և Մկրտիչեվ № 13 տանից, Պօկրովսկայա զօրանոցների մօտ, 7-դ քաղաքամասում. հիւանդանոցից դուրս եկան՝ 2 տղամարդիկ և մէկ կին։ Այսպէս չը դուրս եկաւ գիշերվայ ընթացքում. յուլիսի 4-ին առաւօտեան հիւանդներ կային՝ 18 տղամարդիկ և 1 կին։ Ապա յուլիսի 3-ին գիշերը, հիւանդանոց բերեցին Քալանթարովի քարվանսարայից Քերբալայ-Բաբաչիմ-օղլին, որին ֆայտոնից արդէն մեռած հանեցին։ Բացի դրանից, յուլիսի 2-ի երեկոյեան Մետեխի բանտի հիւանդանոցը բերեցին Թիֆլիսի նահանգական բանտից խօլէրայով հիւանդ մի բանտարկեալ՝ Մահօմէդ Հուսէյնօղլի ազգանունով։ Հիւանդին բժշկական օգնութիւն հասցրին, և յուլիսի 3-ին նա արդէն իրան լաւ էր զգում։

—

Ելիսաւետպոլի նահանգապետի տուած տեղեկութեան համեմատ, յուլիսի 2-ին Շուշի քաղաքի հիւանդանոցը մտան 7 հոգի հիւանդներ, առողջացան 4, մեռան 7, մնացին 26 հիւանդներ. գաւառում կային 3 հիւանդներ. նոր հիւանդացողներ չը կային. Զէվանշիրեան գաւառում հիւանդանոցները մտան 9, ընդհանուր թուից առողջացան 4, մեռան 8, մնացին 21. Զանգեզուրի գաւառում հիւանդանոց մտան 11. ընդհանուր թուից մեռան 14, մնացին 27 հիւանդներ։ Ղազախի գաւառում կար 1 հիւանդ. Նուխի քաղաքում 2 հիւանդներ կային, հիւանդացան 8, առողջացան 2, մնում էին 7 հիւանդներ. գաւառում հիւանդացան 3. Ելիսաւետպոլ քաղաքում կային 2, իսկ գաւառում կային 3 հիւանդներ. գաւառում ընդամենը 93 հիւանդներ կային։

—

Դաղստանի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 2-ին Պետրովսկում հիւանդացաւ 1, մեռաւ 1. Կիւրինեան և Կայտարօ-Ցարասարանեան շրջաններում հիւանդացան 24, մեռան 7, առողջացան 3. մնացին հիւանդներ՝ Շուրայում—1, Պետրովսկում—1. Կիւրինեան շրջանում—13, Սամուրեան շրջանում—16, Կայտագօ-Ցարասարանեան շրջանում—26 և Դարգինեան շրջանում—20 հոգի։

—

Բաղուի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 2-ին խօլէրային հիւանդանոցը մտան 35, նրանցից եկւորներ էին 27, ընդհանուր թուից մեռան 10, եկւորներ 6. առողջացան 19. մնացին հիւանդանոցում 141, նրանցից եկւորներն էին 104. Հիւանդանոցից դուրս մեռան 32, եկւորներ 14. Բաղուի շրջաններում և նահանգի այլ գաւառներում հիւանդացան 89, եկւորներ 14. մեռան 65, եկւորներ 19. առողջացան 4. Սալիանի պահեստի զօրքի հիւանդանոցը մտան 2, մնացին 29. Բաղուի բանտում մեռաւ 1, հիւանդները 5 էին։

—

Ելիսաւետպոլի նահանգապետը հաղորդում է, որ յուլիսի 3-ին Շուշի քաղաքում հիւանդացան 7, առողջացան 4, մեռան 5, մնացին 24. գաւառում հիւանդացան 5, մեռան 3, առողջացան 2. մնացին 3 հիւանդներ. Զէվանշիրեան գաւառում հիւանդացան 11, մեռան 7, առողջացան 2, կային 23 հիւանդներ. Զանգեզուրի գաւառում կային 27 հիւանդներ. Ղազախի գաւառում կար 1 հիւանդ. Նուխի քաղաքում կային 7, գաւառում 3 հիւանդներ։ Ելիսաւետպոլ քաղաքում հիւանդացան 7, մեռան 5, կային 4 հիւանդներ. գաւառում հիւանդացան 8, առողջացան 2, մեռան 5, կային 4 հիւանդներ։ Ընդամենը նահանգում կան 96 հիւանդներ։

—

Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում յուլիսի 4-ին առաւօտեան խօլէրայով հիւանդներ կային 18 տղամարդիկ և 1 կին. օրվայ ընթացքում հիւանդանոց մտան 2 տղամարդիկ և մէկ կին՝ իշխան Ալէքսանդր Շալիկով, որին հիւանդանոց տարան սեփական տնից, Սիմոնկայա փողոցի վրա, 5-դ քաղաքամասում, Հուսէյն-օղլի, Նովայա-Գօլանդիայում գտնվող աղիւսագործարանից, 1-ին քաղաքամասում, և Թոմասովա՝ Վասիլիեվայի տնից, Բագրատիոնովսկայա փողոցի վրա, 1-ին քաղաքամասում. մեռաւ Միշին ազգանունով մի տղամարդ. փոխադրված է մի ուրիշ բաժանմունքում Զիլօ-շվիլի։ Երեկոյեան, յուլիսի 4-ին, Միքայէլեան հիւանդանոցում խօլէրայով հիւանդներ կային՝ 18 տղամարդիկ և 2 կանայք։ Յուլիսի 4-ի գիշերվայ ընթացքում եկան երկու տղամարդիկ՝ Աբաշկին՝ Սկվօրցովի № 11 տնից, Զուղուրեթում, 8-դ քաղաքամասում, և Աստուածատուրով՝ Փիրոյեանցի տնից, Դվօրեանսկայա փողոցի վրա, 5-դ քաղաքամասում։ Յուլիսի 6-ի գիշերը հիւանդանոցից դուրս եկողներ չը կային. յուլիսի 5-ի առաւօտեան Միքայէլեան հիւանդանոցում խօլէրայով հիւանդներ կային՝ 20 տղամարդիկ և 2 կանայք։ Բացի դրանից, 8-դ քաղաքամասից, 1-ին Գօնչարնայա փողոցից, սեփական տնից, հիւանդանոց բերեցին Եֆիմեա Բէժատաշվիլին, որին կաքից արդէն մեռած հանեցին։—Յուլիսի 4-ին և 5-ին Թիֆլիսի նահանգական բանտից Մետեխի բանտի հիւանդանոցը բերվեցան երեք հիւանդ բանտարկեալներ ասիական խօլէրայի նշաններով՝ Արտեմ Սարիբէգով, Եվդոկիա Եվտուշենկո և Իվան Կովալով, որոնցից Արտեմ Սարիբէգով յուլիսի 5-ին մեռաւ։ Բացի դրանից, յուլիսի 4-ին, 10 քաղաքամասում, Ելիսավետինսկայա փողոցի վրա № 178 տան մէջ խօլէրայով հիւանդացաւ Ալէքսանդր Բաբանասով հինգ տարեկան երեխայ. յուլիսի 5-ին, Գօնչարնայա փողոցի վրա, 8-դ քաղաքամասում խօլէրայով հիւանդացաւ Իշխանուհի Նակաշիձէ և մի և նոյն օրը մեռաւ։ Բժշկվում է տանը խօլէրայով հիւանդացած Տակաօ Թուրազաշվիլի, որը բնակվում է Նաթեղուղում, իր սեփական տանը։

—

Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում յուլիսի 5-ին խօլէրայով հիւանդներ կային՝ 20 տղամարդիկ և 2 կանայք. յուլիսի 5-ին հիւանդանոց մտան 2 տղամարդիկ և 1 կին. մեռան 2 տղամարդիկ և 1 կին։ Յուլիսի 6-ին հիւանդանոցում խօլէրայով հիւանդներ մնացել էին՝ 20 տղամարդիկ և 2 կանայք, որոնցից 14 տղամարդիկ սկսել են առողջանալ։ Բացի դրանից Թիֆլիսի Մէտեխի բանտի հիւանդանոցում յուլիսի 5-ին կային խօլէրայով հիւանդ 2 բանտարկեալներ Թիֆլիսի նահանգական բանտից և 5-ին յուլիսի նոյն բանտից մտաւ 1 հիւանդ, որոնցից մեռան 2. յուլիսի 6-ին մնացել է 1 հիւանդ բանտարկեալ։

ՎԱՐԱԿՎԱԾ ԻՐԵՐԸ

—

Խօլէրայի տարածման և զարգացման ամենագլխաւոր գործօններից մէկը հիւանդին պատկանող իրերն են,—նրա անկողինը, շորերը, սպիտակեղէնները։

Այն ամենը, ինչ որ աղտոտվել է հիւանդի արտաթորութիւններից (մանաւանդ նրա փոխնորդը և անկողինը) դառնում է մի նոր վարակիչ մարմին, որը պէտք է ոչնչացնել կամ ախտահանել, դեզինֆեկցիայի ենթարկել։

Վաղուց յայտնի է, որ խօլէրայով հիւանդի իրերին ձեռք տալն անգամ երկիւղալի է։ Եւ ճըշմարիտ, որ այն իրերը, որոնց վրա ընկել է հիւանդի արտաթորութիւններից մի կաթիլ անգամ, որոշեալ հանգամանքներում վարակում է ուրիշներին։ Հիւանդին այցելելը, նրան ձեռք տալը, ժամերով կողքին նստելը կարող է բոլորովին անվնաս անցնել, այն ինչ նրա դուչակի վրա պառկելը, կամ նրա շապիկը հագնելը վերին աստիճանի վտանգաւոր է։

Այս է պատճառը, որ պիտի խոյս տալ խօլէրայով հիւանդին կամ մեռածին պատկանող բաներից, և ամենից լաւն է ոչնչացնել այդ իրերը։

Սակայն, քանի որ այդ ախտը տարածվում է գլխաւորապէս աղքատ ժողովրդի մէջ, որոնց համար մի շապիկը և մի բարձը թանգ արժէն, ուստի

հիւանդների տէրերը թաղցնում են այդ կասկածելի իրերը, որպէս զի բժիշկը չայրէ նրանց: Այս վերջին հանգամանքը կարող է սարսափելի աղետների պատճառ դառնալ: Վարակված իրերը ձեռքից ձեռք անցնելով, կը տարածեն էպիդէմիան քաղաքի աղքատ մասերում, որտեղ խեղդել նրան անկարելի կը լինի: Եւ որպէս զի հիւանդի տէրերը չը թաղցնեն միկրօբների այդ բները, անհրաժեշտ է վճարել նրանց այրելու իրերի արժողութիւնը:

Այդ նպատակին քաղաքային վարչութիւնը յատկացրել է կարծեմ հազար ռուբլի, բայց կարծիք չը կայ, որ այդ գումարը բաւական չէ, քանի որ կարող են պատահել այնպիսի դէպքեր, որ հարկ լինի ամբողջ փայտեայ շինուածքներ կրակի տալ: Այս դժուարին րօպէում բանիմաց և ունևոր հասարակութիւնը պիտի օգնութեան հասնի քաղաքային վարչութեանը, որը ոչինչ չէ խնայում քաղաքը փրկելու համար:

Ուրախութեամբ պէտք է ասեմ, որ մի պարոն յղացել է արդէն այդպիսի մի միտք: Մենք յուսով ենք, ուրեմն, որ այս գաղափարը,—կազմել մի գումար աղքատների տներում վարակված իրերը գնելու համար—ոչնչայնելու նպատակով—կիրադործվի և այսպիսով մեր բազմաթիւ պահպանողական միջոցների վրա կաւելանայ մի նոր ազդու միջոց ևս:

Թող ուրեմն կազմվի մի մասնախումբ, որը անմիջապէս կարողանար սկսել հանգանակութիւն:

Այս գործում ևս մենք մեծ յոյս ենք դրած մեր վաճառական դասի վրա: Նրանք կը հասկանան, որ այսօր մի քանի ռուբլի զոհելով, նրանք գուցէ կազատեն իրանց ամենամեծ կորուստներից ապագայում: Թող չը մոռանան նրանք Բագուն, որի դրամական կորուստը այնքան մեծ է, որ մօտաւորապէս որոշելն անդամ անկարելի է:

Բժշկապետ Վ. Արծրունի

ԲԱԳՈՒԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

«Տարազ» շաբաթաթերթի մէջ կարդում ենք հետևեալ յօդուածը, որը մի ճիշդ պատկեր է տալիս մեզ Բագու քաղաքի այժմեան դրութեան մասին:

Բագուն, հարուստ, զուարթ Բագուն այսօր ամայացել է: Հարիւր քսան հազար բնակիչ ունեցող Բագուում այսօր մնացել է հազիւ քսան հազար հոգի: Մի ամսվայ ընթացքում Բագուն յիսուն տարով յետ գնաց: Այսօրվայ Բագուն հազիւ թէ մի քանի տարիների ընթացքում կարողանայ հասնել մի ամիս սրանից առաջվայ Բագուի վիճակին:

Եւ այդ մենք գտնում ենք շատ բնական, որովհետև բազուցիները միայն իրանց գլխարկով, հագուստով և տնային արտաքին կենցաղով նման էին քաղաքակրթված ժողովրդին, իսկ իրանց գործունէութեամբ, ներքին կենցաղով բոլորովին նոյնն էին՝ ինչ բուն բազուեցի սկսօպէցը, մօլթանը, սարունչեցի սայլապանը: Բախտի բերմամբ Բագուի բնակիչները հարստացան: Հեշտ միջոցներով ձեռք բերված հարստութիւնը, ինչպէս ասում են, բազուցիների «աչքերը իրանց քեալլաները գցեց:» Բազուցիները իրանց քաղաքագլխով, ձայնաւորներով միշտ էֆէկտի և արտաքին փայլի ետևից էին ընկած, նրանք ամեն տարի տասնեակ հազարներ էին ծախսում զանազան դիմակահանդէսների, պարահանդէսների համար. նրանց քաղաքագլուխը տարին մի անդամ այնտեղ բարեկենդանին տրվող դիմակահանդէսին ծառաների համար հագուստներ էր կարում մետաքսից և թաւիշից. բազուցի կինը այդ պարահանդէսին իրան համար դերիա էր կարել տալիս Պարիզում, որ նստում էր երբեմն մինչև հազար ռուբլի և բազուցի ջէնտլմէնը Թիֆլիսից մի փունջ ծաղիկ էր պատուէր տալիս երբեմն մի հարիւր ռուբլով և այդ գիշեր էլ այնտեղ ծախսում մի հինգ հարիւր ռուբլի, որպէս զի հաճոյանայ իր քաղաքագլխին: Եւ այդ երեկոյթը, ընթերցող, տրվում էր բարեգործական նպատակով, Ապշերոնում երևակայական խեղդվողների համար: Իսկ այսօր երբ թշուառ Բագուն իր օրհասի մէջն է, հիւանդ, քաղցած, ծարաւ, մէկը չը կայ այդ բարեգործներից, որ դէթ լոկ խօսքով մխիթարել սգաւորին, յոյս տայ հիւանդին:

Քաղաքագլուխը կորցրել է այժմ ոչ միայն իր գլուխը, այլ և համարեա բոլոր անդամներին իրանց ստանձնած պաշտօններով: Էլեկտրական լուսով գիշերը ցերեկ դարձնող քաղաքագլուխը չէ կարողանում այսօր նաւթի աշխարհի գէթ մի քանի փողոցները կերօսինով ազատ լուսաւորելու: Ծառաներին մետաքս ու թաւիշ հագցնող քաղաքագլուխն այսօր անկարող է գէթ կիսամերկ ծառաներ դտնել որպէս զի իր ամայացած քաղաքը պահպանեն: Բագու քաղաքը այսօր չոր հաց չունի ուտելու, մի բաժակ թարմ ջուր չունի խմելու, այն քաղաքը, որ դեռ մի ամիս չը կար, չոր հացի տեղ զանազան կաթնահոտնց թիւռաձքներ էր ուտում, ջրի տեղ շամպայն գինի էր խմում: Բագուի անհոգ, ագէտ քաղաքային վարիչների շնորհով այսօր ամբողջ մեր պետութիւնը և մեր հարևան երկիրները տուժում են, տուժում իրանց կեանքով: Ամեն կողմից մեր ստացած բոլոր թղթակցութիւնները միայն օրվայ աղեռն են նկարագրում: Աստրախանում, Սարատովում և համարեա ամբողջ Վոլգայի վրա խոլերան մեծ զոհեր է տանում: Բագուի կրտսեր, բայց հարգատ եղբայր Ցարիցին, բազուցիների նաւթի պահեստը, նոյնպէս իր գլուխը կորցրել է և կառավարութիւնից է խնդրում բարոյական և նիւթական խնամք:

Վերջին քսան օրվայ մէջ՝ յունիսի 6—26 պաշտօնական տեղեկութիւններից միայն երևում է, որ Բագուում մնացել են 996 հոգի և Բալախանում 37 հոգի: Զը պէտք է մոռանալ, որ Բագուում հազիւ 20,000 հոգի լինի մնացած և այդ տեղեկութիւնը պաշտօնական աղբիւրից է առնված: Իսկ շատ շատերը դեռ ծածկում են իրանց հիւանդներին և մեռնողներին:

Պ. Կառավարչապետի Բագու գնալը մի փոքր սթափեցրել է քաղաքի վարիչներին և նահանգապետին: Բանից դուրս է եկել, որ Բագուի նահանգապետը, մինչև պ. Կառավարչապետի այնտեղ գնալը՝ ոչ մի անդամ դեռ յաճախած չէ եղել հիւանդանոցը և առաջին անդամ, ի հարկէ, ակամայ, պ. Կառավարչապետի հետ է գնացել: Պ. Կառավարչապետը հրամայել է քաղաքագլխին քաղաքի պահեստի դրամը 166,000 ռ. բոլորը ծախսել քաղաքը առողջական վիճակի մէջ դնելու համար: Բագուում մնացած բնակիչները շրջապատել են նահանգապետի տունը, ուր իջևանած է եղել պ. Կառավարչապետը, որի հրամանով շրջապատողները իրանց մէջից պատգամաւորներ են ընտրել թէ թուրքերից, թէ հայերից և թէ ռուսներից ու ներկայացել պ. Կառավարչապետին: Թուրքերը խնդրել են, որ իրանց պարագաների վճարման ժամանակը երկարեցնեն, հայերը՝ որ իրանց տները, գոյքը պահպանվեն և ռուսները՝ որ իրանց հաց մատակարարվի:

Բազուում կողոպուտներ արդէն սկսվել են, մի քանի հարուստների տներ կողոպտված են արդէն: Օրերով ուտելու հաց, միս չէ գտնվում քաղաքում: Թիֆլիսից ամեն օր երկաթուղու վարչութիւնը իր բոլոր ծառայողների համար ամբողջ գծի վրա ուղարկում է հաց, միս և այլ ուտելիքներ. բոլորը ուղարկվում է առանձին արկղներում և սառցի մէջ դրած:

Թիֆլիսի առևտրական բանկը Բագուի իր բաժանմունքում ծառայողների համար նոյնպէս ուտելեղէն, խմիչք է ուղարկում և աւելացրել է ծառայողների ռօճիկը:

Պատմում են որ գլխակները Բագուում օրերով մնում են առանց թաղելու: Մսավաճառանոցում մեռնում է մսավաճառը, թոնրատանը հացթուխը և ոչ ոք դեզինֆէկցիա չէ անում այդ խանութները: Մի խօսքով բազուցիք ապացուցին իրանց մտաւոր տգիտութիւնը, պատուհասի ժամանակ թողեցին անխնամ իրանց հաղարաւոր ստորադրեալներին, բանւորներին և իրանք փախան: Բազուցիների տգիտութեան շնորհով այսօր մեր ամբողջ պետութիւնը լաց ու կոծի, սգի մէջ է:

ՆԱՄԱԿ ԴԱՆԶԱԿԻՑ

Յունիսի 27-ին

Վերջապէս մեզ մօտ էլ բերեցին խոլէրան Բագուից եկողները: Խոլէրայով հիւանդանալու վեց դէպքեր են եղել, որոնցից մեռել են 5-ը, իսկ մէկը գտնվում է խոլէրային հիւանդանոցում: Բոլոր հիւանդացողները Բագուից եկողներ են: Տեղիս ժողովուրդն վերին աստիճանի անհոգ է: Թէև մեզանում կազմվել են սանիտարական խմբեր, որոնց պարտաւորութիւնն է հսկել մաքրութեան վրա և հիւանդութեան տարածման առաջն առնելու, բայց և այնպէս, դրանք ընտրված են «փորձի» համար, որ մաքրութեան վրա նայեն կողմնակի կերպով: Փողոցները, տների բակերը այժմ մեզանում կատարեալ աղբանոցներ են, իսկ արտաքնոցների համար չինված են առանձին ստորերկրեայ կանալների փոխարէն հասարակ փոսեր, որոնք արտաթորութիւններով լի լինելով, տարիներով չեն մաքրում: Քաղաքի շատ տեղերում, մանաւանդ Թուրքերի թաղում, փոսեր էլ չը կան, այլ արտաթորութիւնները ուղղակի ծածկում են գետնի երեսը և շատ անդամ բոլոր անմաքրութիւնները ուղղակի թափվում են փողոցի մէջտեղ: Փողոցները ծածկված են անատանելի փոշիներով և երբէք չեն ջրվում: Փողոցների երկու կողմից չինված են փոքրիկ առուակներ, որտեղ ամեն մի տան առաջ կարելի է նկատել կանանց՝ կեղտոտ շորեր լուանալիս և շատ անդամ այդ կեղտոտ ջուրը դոր են ածում կերակուրի մէջ և կամ խմելու: Զարմանալի է որ թէ սանիտարական խմբերը և թէ ոստիկանութիւնը չեն արգելում տեղիս շուկայում զանազան փտած մրգեր և կանանչեղէններ ծախելու, որ ամեն մի թուրք խանութպան՝ շաբաթներով ունի դիզած իր խանութի առաջ. այդ խանութներն էլ գտնվում են վերին աստիճանի հակառողջական դրութեան մէջ և սովորաբար ոչինչ ուշադրութիւն չեն դարձնում այն դարշահոտութիւնների վրա, որոնք խօլէրայի առաջին բարեկամներն են: Քաղաքացիք, գրեթէ մեծ մասը, արդէն դուրս են գնացել ամարանոց, դլխաւորապէս Հաջի-Քեռանդ, որտեղ այժմ տեղը չը լինելու պատճառով, շատերը ստրպված են քարձրանալ սարերի գլուխները: Ինչպէս պատմում են ոչ մի տարի Հաջի-Քեռանդ ամարանոցը այսքան լի չէ եղել բազմութեամբ, որքան այս տարի, առաւել ևս բազուցիներով, որոնք բազմութեան մեծ մասն են կազմում: Անցեալ տարիները Հաջի-Քեռանդում ամառվայ սեզոնի ժամանակամիջոցում երկու կամ երեք սենեակները կարելի էր վարձել 150—250 ռուբլիով, իսկ այս տարի 400 ռուբլիով էլ հազիւ կարողանում էին վարձել: Թէ տները և թէ հիւրանոցները բոլորն էլ վարձված են, նորեկները ստիպված են անտառում վրանների տակ ամառն անցկացնել:

Ամեն օր Բագուից մեծ քանակութեամբ ընտանիքներ են գալիս տեղս, բայց հիւրանոցներում, շատերից վախենալով չեն ընդունում, ընդունվածներին էլ ոստիկանութիւնը ստիպում է երեք օրով սենեակից դուրս չը գալ և այդ սենեակն ու նրանց իրերը անչուշտ պիտի կարբոլեան թթուատով սրսկել:

Եղանակը այստեղ մի շաբաթ անձրևային լինելուց յետոյ, այս քանի օրերը դարձեալ փոխվեց ամառնային տաք օրերի:

Ա. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեր թղթակիցը գրում է մեզ. «Խօլէրայի տարածմանն առաջն առնելու համար մտադրութիւն կայ Երևանից այստեղ բերվող խակ մրգերի վաճառելն արգելել: Պէտք է խոստովանվել, որ Նոր-Բայազէտում միշտ ծախվում են ամենավատ տեսակի մրգեր:»

—

Մեզ գրում են, որ Նոր-Բայազէտի հայ թատրօնասէրների խումբը պատրաստվում է մի շաբաթից յետոյ մի ներկայացում տալ յօդուտ այդտեղի հայոց ուսումնարանի: Դիտաւորութիւն ունեն խաղալ «Թուղթ խաղացողի կեանքը» պիէսան:

—

ԱԽԱԼՑԻԽԱՅԻՑ մեզ գրում են հետևեալը. «Աչքի առջև ունենալով որ այստեղ էլ կարող է երևալ խօլէրան, տեղիս հայ թատրօնասէրները, մասնակցութեամբ դերասան պ. Սարդարեանցի, մի ներկայացում տուեցին տեղիս հիւանդանոցի օգտին: Խաղացին «Սմբատ առաջին» ողբերգութիւնը: Ժողովուրդ շատ կար և ներկայացումից գոյացած արդիւնքը յանձնվեց պ. Տէր-Միքայէլեանցին: Այժմ Սարդարեանց ուղևորվեց Աբասթուման, մի և նոյն նպատակով մի ներկայացում տալու համար:»

—

Մեզ հաղորդում են ՂՈՒԲԱՅԻՑ հետևեալը. «Սամուր գետում ջուրը վարարվելով՝ այս օրերս մի հարուստ հրէայ խեղդվեց այդ գետում. ջուրը տարաւ և սայլակը, իսկ ձիերը և հրէայի ճանապարհորդ ընկերը ազատված են: Ռուբաս գետակում, դէպի Դերբէնտ տանող ճանապարհի վրա, խորասուզվեց պօստային սայլակը. պօստը ազատված է, թէև բոլոր նամակներն ու լրագիրները սաստիկ թրջված են եղել: Ղուբա գետակն էլ կամուրջ չունի, և այդ պատճառով նորերումս մի մարդ և մի ձի խեղդվեցան այդ գետակի ջրերի մէջ:»

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքի հայոց ուսումնարանում հարցաքննութիւնները վերջացան: Տարեկան հաշվից երևաց, որ ուսումնարանն այս տարի ոչ թէ միայն վնաս չէ կրել, այլ արդիւնք էլ է ունեցել: Այժմեան ուսուցիչները հրաժարվել են եկող տարվայ համար մնալ ուսումնարանում և այդ պատճառով նոր ուսուցչական խումբ պիտի կազմվի Ղուբայի ուսումնարանի համար:

—

«Тифл. Листокъ» լրագրում տպված է մի վրացի կալուածատիրոջ հետաքրքիր և շատ ուսանելի թղթակցութիւն: Կալուածատէրը պատմում է թէ ինչպէս նա ժողովեց իր գիւղացիներին և ըսկսեց պատմել նրանց թէ ինչ բան է խոլէրան և թէ ինչ միջոցներով դլխաւորապէս անպայման մաքրութիւն պահպանելով կարելի է առաջն առնել հիւանդութեան տարածման դէմ: Սակայն նրա խօսքերը ոչինչ ներդործութիւն չունեցան ագէտ գիւղացիների վրա: Նրանք երկար ժամանակ լուռ էին մնում և թերահաւատութեամբ նայում էին քարոզող կալուածատիրոջ վրա: Վերջապէս գիւղացիներից մէկը, մի ծերունի, բաժանվեց ամբոխից, մօտեցաւ կալուածատիրոջ և մօտաւորապէս հետևեալ խօսքերն ասեց. «աղա, այդ բոլոր խորհուրդները դատարկ բաներ են, հարուստ և ուսումնական մարդիկ բան ու գործը թողած՝ այդ տեսակ բաներ են հնարում, իսկ դու, աղա, նրանց խօսքերը կրկնում ես. յիսուն տարի է ահա, որ իմ խրճիթիս առջև աղբի ահագին կոյտեր են ածված և այդ անմաքրութիւնը լինած ու իմ ընտանիքին ամենևին չէ վնասում:» Ժողովրդի նախապաշարմունքի դէմ կռուելը, վերջացնում է իր խօսքը թղթակից կալուածատէրը, աւելի դժուար է, քան նոյն իսկ խոլէրայի պէս էպիդէմիայի դէմ մաքառելը: Ժողովուրդն ասում է. «եթէ Աստուած չի ուզենայ որ ես մնանեմ, ինչքան էլ կեղտոտ ապրեմ, հիւանդութիւնն լինձ չի դիպչի, իսկ եթէ լինձ վիճակված է Աստուծու կամքով մեռնել,—այն ժամանակ ինչքան էլ մաքրեմ ընակարանս, բակս ու լինձ էլ մաքուր պահեմ, այնու ամենայնիւ պիտի մեռնեմ, որովհետև այդպէս է Աստուծու կամքը:» Այդ տեսակ վնասակար հայեացքը ժողովրդի մէջ, աւելացնում է կալուածատէր թղթակիցը, դլխաւորապէս պահպանում են մեր հոգևորականները, որոնք իրանց քարոզներում անդադար կրկնում են թէ ամեն մի հիւանդութիւն՝ Աստուծու կամքով մարդկանց մեղքերը պատժելու համար ուղարկվող պատուհաս է: Պէտք է ամեն ջանք գործ դնել աւարտում է իր խօսքը կալուածատէր հեղինակը, մեր հոգևորականներին, մանաւանդ գիւղական քահանաներին համոզելու՝ այդ տեսակ կորստաբեր հայեացքներ չը յայտնել իրանց քարոզներում, և վերջ դնել տգէտ ամբոխի մէջ այնպիսի մտքերի տարածելուն, որոնք մոլորեցնելով ժողովրդին, զրկում են նրան ինքնօգնութեան, ինքնագործունէութեան փրկարար և հասարակաօգուտ քաղաքակրթիչ յատկութիւններից:

—

Տպագրելու համար մեզ ուղարկված են հետևեալ տեղեկութիւնները. «Վերջին ժամանակներս Թիֆլիսում զգալի կերպով բարձրացել են փայտեղէնի գները: Օրինակի համար, երկու ամի սրանից առաջ կարելի էր գնել կոճեղէնի քառակուսի վերշօկը 22—23 կոպէկով, իսկ տախտակեղէնը սկսած մի վերշօկ հաստութիւնից՝ վերշօկը կարելի էր գնել 25 կոպէկով, այն ինչ այժմ մի և նոյն ապրանքը հազիւ կարելի է գնել՝ կոճեղէնի վերշօկը 30 կոպ., տախտակինը 32—35 կոպէկով: Փոքր ժամանակամիջոցում գների այդպիսի փոփոխութիւնը շատերը վերագրում էին Կուր գետի յորդանալուն, որովհետև ջուրը բաւական աւելանալով անկարելի է տոփեր բերելը, որովհետև լինում էին մարդկային զոհեր, իսկ այժմ չը նայած ջուրը իր սովորական չափն է ստացել, այնու ամենայնիւ գները նոյնն են: Տոփաստանները գնում են տոփեր Բօրժոմից, ու բերելով այստեղ կապում են Սատիվօ (Մուշտէյդ այդու դիմաց, որտեղ տոփերի սովորական պահեստն է) ու իրանց ուղած գներով էլ վաճառում են, տեղիս գործարանատէրերի և խուրձերի վրա: Թիֆլիսում այժմ կայ վեց շոգեշարժ տախտակ սղոցելու գործարաններ, որոնք բոլորն էլ

հայերին են պատկանում, կան և խուրծներ (ձեռքով սղոցողների քարիանաներ). վերջիններիս թիվը հասնում է վաթսուն հինգի, որոնց մեծամասնութիւնը վրացիք են։»

—

ԹԻՖԼԻՍԻ նահանգապետը հրաւիրում 6 բժիշկ և 12 ֆելդշէրներ Թիֆլիսի նահանգում սանիտարական գործի ղեկավարութիւնը յանձն առնելու։ Բժիշկը կը ստանայ ամսական 300 ռուբլի, իսկ ֆելդշէրը 50 ռուբլի։ Ճանապարհածախսն առանձին։ Ցանկացողները կարող են դիմել նահանգապետին կամ անձնապէս, կամ հեռագրով։

—

Ծխախոտի գործանատէր Միքայէլ Սափարեանց, Թիֆլիսում գտնվող իր գործարանում ամեն օր ձրիապէս թէյ և շաքար է բաժանում բոլոր ծառայողներին և բանուորներին։

—

Յունիսի 4-ին, առաւօտեան, բացվել է ձրի թէյատուն ԹԻՖԼԻՍԻ Կուկիա թաղում գտնվող լութերական եկեղեցու բակում։

—

Յուլիսի 3-ին Թիֆլիսից ուղարկվել են Բագու 500 հատ վրաններ։

—

Այնպիսի հատատութիւններումն էլ, ինչպէս Թիֆլիսի դատաստանական պալատն է՝ յուլիսի 1-ից ձրիապէս թէյ է տրվում դիւանատան մէջ բոլոր ծառայողներին։

—

ԹԻՖԼԻՍԻ ոստիկանապետ պ. Մաստիցկի անպայման արգելել է բնակիչներին Կուր գետից ջուր կրելու, նմանապէս և լողանալու գետի մէջ։

—

«Տարազ» շաբաթաթերթը գրում է հետեւեալը. «Թիֆլիսը, չնորհով կանխաւ ձեռք առնված միջոցների, համարեա ազատ կարելի է համարել էպիդէմիայից։ Խոլէրայից հիւանդացողներին առ այժմ բացառութիւն պիտի համարել։ Հիւանդանում են գլխաւորապէս կեղտոտ թաղերի բնակիչները, կամ Բագուից եկածները։ Պարսից և Թիւրքաց հիւպատոսները իրանց հպատակներին յորդոր են կարդացել, որ մաքուր պահեն իրանց բնակարանները և կազմեն սանիտարական խմբեր։ Հիւպատոսներն իրանց անձնական գումարից զոհաբերութիւն են արել, որոնց ունեւոր հպատակներն էլ հետեւելով՝ կազմել են մի գումար, որով մաքուր սենեակներ են վարձում աղքատների համար, նրանց կերակրում են, բժիշկ են վարձում և այլն։ Ջիաքաշ երկաթուղու ընկերութիւնը և գործարանատէրերը իրանց բանուորներին և մշակներին ձրի թէյ և նպաստներ են տալիս։ Քաղաքագլուխը, ոստիկանապետը, սանիտարական խմբերը գործում են անձնուիրաբար, և նրանց աջակցում է և ազգաբնակութիւնը։ Անդրկովկասեան երկաթուղու գծի վրա իշխաններում ճանապարհորդները կերակրվում են ձրի, կառավարութեան հաշվով։ Դադարեցրած է I և II կլասի վագոնների երթևեկութիւնը։ Ճանապարհին երեք տեղ է կանգնում գնացքը և փոխանակ 18 ժամի, գնացքը ճանապարհին մնում է 48 ժամ (որպէս զի կարողանան հետեւել թէ ով է հիւանդանում)։ Ճանապարհորդների զգեստները և իրեղէնները դեզինֆէկցիային են ենթարկում։»

—

Երկու նշանաւոր երևոյթներ են նկատվում խոլէրայի վերաբերմամբ. 1) որտեղ տիրում է անպայման մաքրութիւն, այնտեղ խոլէրան զոհեր չէ անում և 2) կանայք անհամեմատ պակաս թիվով են վարակվում խոլէրայով, քան տղամարդիկ, իսկ երեխաները գրեթէ ամենևին էլ չեն վարակվում։ Այդ երևոյթը կարելի է դրանով բացատրել որ կանայք և երեխաներ բնականաբար անհամեմատ աւելի կանոնաւոր և չափաւոր կեանք են վարում, քան տղամարդիկ, որոնք աւելի աշխատում են, ուրեմն աւելի էլ յոգնում են, աւելի անկանոն կեանք են վարում առհասարակ, և վերջապէս իրանց կեանքի եղանակի ամեն պարագաներում՝ աւելի անզուսպ են, քան թէ կանայք։

Մի ազգ գոկտոր Արշակ Տեր-Միքէլեան ներկայ 1892 թուին հրատարակեց Լէյպցիգում, գերմաներէն լեզուով մի գրուածք հետեւեալ վերնագրով «Հայոց եկեղեցին և նրա յարաբերութիւնները դէպի Բիւզանդականը, IV դարուց սկսած մինչև XIII դարը» (Die Armenische Kirche in ihren Beziehungen zur Byzantinischen, von IV bis zum XIII Jahrhundest, von Dr. Arsak Ter-Mikelian, Leipzig, Gustav Fock, 1892). գինը 3 ֆրանկ է։

—

Մեզ գրում են ՍՂՆԱԽԻՑ հետեւեալը. «Այս օրերս սպասում ենք Սղնախում նկարիչ Գէորգ Բաշինջաղեանին։ Նա մտադիր է նկարել Ալազանի հովիտը և մի քանի ուրիշ տեսարաններ։ Մենք յուսով ենք որ պ. Բաշինջաղեան այստեղից կը վերադառնայ Թիֆլիս նոր նկարների առատ պաշարով։»

—

Լոնդոնում հրատարակվող «The Echo» լրագիրը, յունիսի 28-ի համարում քաղուածք է արել «Մշակի» մէջ նորերումս հրատարակված «Ընդհանուր գինաթափ» վերնագրով յոդուածից։ Անգլիական լրագիրը մեծ համակրութեամբ է խօսում մեր վերոյիշեալ յոդուածի մասին, որը գրված է եղել Ֆոն-Սուանէր կոմտեհոս հռչակաւոր բոմանի առիթով։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ մեզ գրում են հետեւեալը. «Թէ Հին-Նախիջևանը և թէ ամբողջ Երևանեան նահանգը վերին աստիճանի հակառողջական դրութեան մէջ են գտնվում, չնորհով ժողովրդի անփոյթութեան, մանաւանդ թուրք ազգաբնակութեան կեղտոտութեան։ Բացի սրանից չը պէտք է մոռանալ որ այժմ, ամառվայ շոգ ժամանակ, երբ ազգաբնակութիւնը մեծ քանակութեամբ մերդ է ուտում, խոլէրան կարող է աւելի էլ շատ տարածվել յիշեալ նահանգում։ Թէ Երևանում և թէ Նախիջևանում ջուրը վատ է։ Պէտք է ամենից առաջ եվ տուած ջուր գործածէ ժողովուրդը։ Ի մէջ այլոց այդ մասին հրահանգ պիտի տրվի ժողովրդին, հայերէն և թուրքերէն լեզուով։ Կարծում ենք դժուար չէ և առանձին ծախս էլ չի նստի սամովարի կամ պղինձի մէջ տաքացրած, եվ տուած ջուրը սառցնել և միմիայն այդ տեսակ ջուր գործածել։ Հարկաւոր չէ սպասել, այլ հարկաւոր է որ այսօրվանից արդէն թէ նահանգական վարչութիւնը, թէ Երևան ու Նախիջևան քաղաքները հրաւիրեն բժիշկներին, սանիտարական անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։

—

«Արձագանքը» արձագանք տուաց «Մշակի» յունիսի 25-ի համարում արած մեր առաջարկութեանը, որ Կովկասեան Բարեգործական ընկերութիւնը ներկայ ժողովրդական աղետի՝ խոլէրայի ժամանակ պարտաւոր է օգնութեան հասնել ժողովրդին, իր գումարից մի պատկառելի նուիրատուութիւն անելով։ Եւ շատ լաւ կանի «Արձագանքը» եթէ միշտ արձագանք տայ լաւ բաներին, փոխանակ զբաղվելու անհամ սրախօսութիւններով (եթէ չասենք ստախօսութիւններով) և նենգամիտ անուանարկութիւններով։ Դա մեր անկեղծ խորհուրդն է։

—

Բագուում, ինչպէս հաղորդում է «Каспій» լրագիրը, ումն Պետր Ստարցևի, հիւանդանալով սիբիրական ախտով (сибирская язва), 13 ժամ տանջվելուց յետոյ մեռել է։ Յունիսի 28-ին էլ Բագուի հիւանդանոցն է բերված ումն Զերնիկով, որը նոյնպէս սիբիրական ախտով է հիւանդացել։

—

Մեզ հաղորդում են, որ Բագուի մէջ վերջին օրերս տարածվել է մի անհիմն լուր, որ իբրև թէ կառավարութիւնը մտադիր է բոլոր ճանապարհները փակել և թոյլ չը տալ, որ քաղաքի մէջ մնացած ժողովուրդը դուրս գնայ Բագուից։ Հարկաւոր ենք համարում յայտնել, որ այդ միանգամայն անհիմն լուր է, որի պատճառով իզուր տեղը Բագուում մնացած ժողովուրդը սարսափի մէջ է ընկնում։

—

Թիֆլիսում բժիշկների պակասութիւն է զգացվում։

—

Մեզ տեղեկացնում են իբրև հաստատ իրողութիւն, որ Բագուում թուրքերը, մի քանի անգամ, խոլէրայով մեռածներին թաղել են իրանց տների ներքնայարկերում։ Այդպէս անելով թուրքերը կամեցել են թաղցնել իրանց հանգուցեալներին։

—

Շուտով պէտք է բացվի երկու ձրի թէյատուն՝ մինը Ալէքսանդրեան այգում, միւսը Հաւլաբար։ Այդ երկու թէյատների ղեկավարութիւնը յանձն առնելու ցանկութիւն են յայտնել մասնաւոր անձինք։

—

Յուլիսի 5-ին տեղական ռուսաց հոգևորականութիւնը նորից թափօր կատարեց Թիֆլիսի փողոցներում, աղօթելով որ խոլէրան դադարի մեր քաղաքում։

—

Հետեւեալ պաշտօնական տեղեկութիւններն են հաւաքված՝ որոնցից երևում է թէ խոլէրան ինչ աստիճան է տարածված Թիֆլիսի զանազան քաղաքամասերում։ Յունիսի 11-ից մինչև յուլիսի 3-ը հիւանդանոց մտան I պօլիցիական բաժնից (Վէրայի թաղ) 13 հիւանդ, 2-րդից (Դավիդովսկայա) 4 մարդ. 3-րդ բաժնից (Սապեօրնայա փողոց և Սօլդատսկից բազար) 8 մարդ, 4-րդ բաժնից (Սէօլակ) խոլէրայի հիւանդութեան ոչ մի դէպք չէ եղել, 5-րդ բաժնից (Մէջին փողոց) հիւանդացել են 7 հոգի. 6-րդ բաժնում (Խարիուս) 11 մարդ, 7-րդ բաժնում (Հաւլաբար Նաթլուղի հետ միասին) 11 մարդ, 8-րդ բաժնում (Զուղուրեթի) 11 մարդ, 9-րդ բաժնում (Կուկիա) 15 մարդ և վերջապէս 10-րդ բաժնում (Կոլոնիա և Դիդուբէ) 16 մարդ։ Ընդամենը, երեք շաբթվայ ընթացքում եղել է խոլէրայի հիւանդութեան 91 դէպք, հաշվելով դրանց մէջ և բոլոր կասկածելի դէպքերը։ Այդքան հիւանդացողներից մեռել են 44 հոգի, ուրեմն 49%։

—

Շտապում ենք, որպէս վերջին լուր, հաղորդել որ յուլիսի 4-ին Կովկասեան կառավարչապետ, գեներալ-ադիւտանտ Շերեմետեվ վերադարձաւ Թիֆլիս իր արած ճանապարհորդութիւնից դէպի Բագու, Դերբէնտ, Պետրովսկ և Գանձակ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Այժմ, և դեռ էլի մի առ ժամանակ անգլիական ներքին կեանքի ամենահետաքրքրական խնդիրը—ընտրութիւնների խնդիրն է։

Պարլամենտական այս ընտրութիւնը պէտք է վճռի ինչպէս այժմեան պահպանողական մինիստրութեան բաղդը, այսինքն նրա անկումը, կամ մնալը, այնպէս և ազատամիտ կուսակցութեան գործի դլուխ անցնելը կամ չանցնելը։

Ահա այդ պատճառով իւրաքանչիւր կուսակցութիւն սրտի տրոփիւնով սպասում է, թէ ով ընտրվեց այս ինչ շրջանում և ով կընտրվի միւս շրջանում։

Համայնքների ժողովի անդամների թիվը հաշված է 670։ Մինչև այժմ ստացված տեղեկութիւններից երևում է, որ ընտրված են միայն 399։ Ընտրվածների մեծ մասը, այն է 215 այժմեան մինիստրութեան կողմնակիցներ են, այն է 185 պահպանողականներ և 30 ունիոնիստներ։ Ազատամիտներից ընտրված են 157 պատգամաւորներ, որոնց հետ միանում են 23 հակապահպանողականներ, ուրեմն ընդամենը 180 ձայն։

Այդպիսով մինչև այժմ ընտրվածներից Սալսբրիի մինիստրութիւնը ունի 215 ձայն, իսկ Գլադստոնի՝ 180 ձայն։ Թվերին նայելով՝ պարզ է որ պահպանողականները առաւելութիւն ունեն. բայց այդ հանգամանքը ոչ պահպանողականներին է սիրտ տալիս, և ոչ ազատամիտներին վհատեցնում։

Ահա թէ ինչու։

Համեմատելով անցեալ ընտրութիւնների հետ, այդ վերջին ընտրութիւնների ժամանակ ազատամիտները խլեցին պահպանողականներից 48 ընտրողական շրջան, այսինքն այն 48 շրջանում, որտեղ անցեալ ընտրութիւնների ժամանակ՝ ընտրված էին պահպանողականները, այս անգամ ընտրվեցին ազատամիտներ։ Իսկ պահպանողականները ազատամիտներից խլել են այդ ընտրութիւններում միմիայն 28 ձայն, որ համեմատելով հին ընտրութիւնների հետ՝ շատ և շատ քիչ է։

Այդպիսով մի յեղափոխութիւն հասարակաց կարծիքի և ընտրողների հայեացքների մէջ՝ յոյս է տալիս ազատամիտներին, որ յաղթութիւնը իրանց կողմը կը մնայ, յուսահատութեան մէջ զցելով Սալսբրիի մինիստրութիւնը, որն արդէն նախատեսնում է իր անկումը, և այդ անկումը անխուսափելի կը լինի, եթէ ընտրութիւնների հետեւանքը նոյն իսկ մի քանի տասնեակ աւելի ձայն կը տայ Գլադստոնի կուսակցութեան, որը այս անգամ իր դրօշակի վրա առաջին տեղը դրել է իրլանդական խնդիրը, այսինքն այն խնդիրը, որի դէմ այժմ կռիւ է յայտարարել Սալսբրի իր ամբողջ կուսակցութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily News» լրագիրը հաւատացնում է, որ Անգլիայում կատարված ընտրութիւնների հետեւանքն այն կը լինի, որ Գլադստոն ձայների խոշոր մեծամասնութիւն կը ստանայ։

—Վիէննայից հեռագրում են, որ Դուբնիցում կանոնաւորել են յայտնի աղաղակ Աթանասի եօթ ընկերներին։

—Հռոմից հեռագրում են, որ Հռոմի պապը դիտաւորութիւն ունի ֆրանսիական հանրապետութեան նախագահի կնոջը չնորհել Ոսկէ Վարդի չքանչանը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիացի յայտնի բնագէտ Լբվալիան հարաւային Աֆրիկայում իր արած ուսումնական ճանապարհորդութեան ժամանակ միշտ իր մօտ ունէր մի կապիկ, որը նշանաւոր պաշտօն էր կատարում ուսումնական արշաւանքում։ Երբ Լբվալիան և նրա ընկերները գտնում էին անյայտ մրգեր կամ արմատներ, որոնք նոյն իսկ Աֆրիկայի բնիկներին անյայտ էին, այն ժամանակ նրանք տալիս էին այդ մրգերը կամ արմատները կապիկին. եթէ կապիկը ուտում էր մրգը կամ արմատը,—դա նշանակում էր թէ դրանք առողջարար և համեղ էին, իսկ եթէ ձեռք չէր տալիս,—դա ապացոյց էր որ մրգը կամ արմատը թունաւոր էին։

*
* *

Այս բոպէիս հիւր է Պետերբուրգում մի ումն Սմօլին, 102 տարեկան ծերունի, որն եկել է Արխանգէլեան նահանգից իր թոռան այցելելու համար։ Չը նայելով իր հասակին Սմօլին շատ ժիր և առողջ է, պահպանել է բոլոր ատամները և աչքերի տեսողութիւնը։ Նա ունեցել է 19 որդի, որոնցից 15 հոգի դեռ կենդանի են։ Սմօլին ունի 30 հոգի թոռներ, որոնցից շատերն ամուսնացած են և ունեն զաւակներ։

*
* *

Ամերիկայի Սան-Ֆրանսիսկո քաղաքում կազմվել է կանանցից և օրիորդներից սիրողների մի օրկեստր, որը կոնցերտներ է տալիս բարեգործական նպատակներով։ Այդտեղ կան և վաճառականների, և ինժէնէրների, և բժիշկների և արհեստաւորների կանայք և աղջիկներ, որոնք ածում են օրկեստրը կազմող երաժշտական այլ և այլ գործիքների վրա։

*
* *

Թիֆլիսցիներին ծանօթ ռուս կլօուն Դուրով, որն այժմ ներկայացումներ է տալիս Բերլինի ցիրկում, այս օրերս ձերբակալվեց Բերլինի ոստիկանութեան հրամանով, որովհետև իր արած կատակներից մինում վիրաւորանք հասցրեց Վիլհելմ կայսրի անուան։

*
* *

Ամբողջ Պարիզը զբաղված է այժմ այն մենամարտութեամբ, որը նորերումս տեղի է ունեցել Պարիզում մարկիզ Մօրէսի և հրէայ կապիտան Մէյէրի մէջ։ Մօրէս պատկանում է հակահրէական կուսակցութեան, իսկ երիտասարդ կապիտան Մէյէր, որը յայտնի էր որպէս լաւ ինժէնէր և տեսուչ էր Ecole Polytechnique դպրոցում, որպէս հրէայ, ուզեց պաշտպանել իր կրօնակիցների պատիւը։ Կապիտան Մէյէր սպանվեց մենամարտութեան մէջ։ Երիտասարդ զինուորականի թաղման հանդիսին ներկայ էր 50,000 հոգուց բաղկացած ամբոխը, որի թւում բաղմաթիւ ֆրանսիացի սպաներ։ Ամբոխը ցոյցեր արեց յուղարկաւորութեան ժամանակ։ Մարկիզ Մօրէս ձերբակալված է։

*
* *

Հռոմում կառուցվում է այժմ մի մեծ ցիրկ, որը աշխարհիս մէջ եղած բոլոր ցիրկերից ամենաընդարձակը կը լինի։ Այդ ցիրկում հին հռոմէական և հին յունական խաղերի նման ներկայացումներ կը տրվեն, սակայն ի հարկէ առանց արիւնհեղութեան։

*
* *

Պոստային աղաւնիները Պարիզից մինչև Վէրսալ (16 վերստ) հասնում են 20 րոպէում, իսկ Շվեյցարիայի Վօ կանտոնից մինչև Պարիզ (240 վերստ) $6^1/_2$ ժամում։ Այդպիսով աղաւնին մէջին հաշվով մի ժամում 60 վերստ է անում։ Կան թռչուններ, որոնք աւելի արագ են թռչում, սակայն նրանց չէ կարելի ընտելացնել պօստային ծառայութեան։ Ագռաւը մի ժամում 100 վերստ է անցնում, իսկ բաղէն աւելի էլ արագ է թռչում. նա մի ժամում 225 վերստ է անցնում։

*
* *

Յայտնի անգլիացի բուսաբան Սաորտվանդ ասում է որ երկրագնդիս վրա կան 4233 բոյսերի տեսակներ, որոնք պիտանի են ուտելու համար, այն ինչ մարդիկ նրանցից գործ են ածում միմիայն 1070 տեսակներ։ Այդպիսով ուտելու համար պիտանի բոյսերի տեսակներից $^3/_4$ մնում են դեռ ևս առանց գործադրութեան և մարդկութիւնը չէ մշակում այդ բոյսերը իր այգիներում և բանջարանոցներում

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յուլիսի։ Երէկ եկաւ «Լէօ» չոգենաւը ալիւրի և հացահատիկի ամերիկական բեռնով յոգնած սովեալների։ «Լէօ» չոգենաւին դիմաւորեց «Պետերբուրգ» չոգենաւը, ուր գըսն-

վում էին՝ քաղաքապետը, քաղաքագլխի պաշտօնակատարը, վարչութեան անդամները, ազնուականութեան առաջնորդի պաշտօնակատար Վսէվոլոժսկիյ և այլն։ Շոգենաւին դիմաւորեցին թնդանօթաձգութեամբ և «ուրա» աղաղակներով։

ԼՕՆԴՕՆ, 3 յուլիսի։ Սիմլայից հեռագրում են, թէ խաղաքաղաքները մերժեցին էմիրի խաղաղասիրական առաջարկութիւնները. երկիւղ կայ, որ դարձեալ խիստ ընդհարումներ չարունակվին։ «Times» լրագրին հեռագրում են Կալկուտայից, որ խաղաքաղաքների համարեա բոլոր ցեղերը, բացի չէյխ Ալի-խանից՝ աքսորվել են ագանական էմիրի դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յուլիսի։ Ներքին գործերի մինիստրը կարգադրել է զանազան գաւառները ուղարկել մինչև յուլիսի 1-ը աւելի քան 30 բժիշկներ, որոնց թիւում 1 պրոֆէսոր, 22 ուսանողներ և 10 ֆելդշէրներ. այս օրերս կրկին կուղարկվին 20 բժիշկներ և 27 ֆելդշէրներ. չուտով կուղարկվին նաև ողորմած քոյրեր։—Յունիսի 30-ին Աստրախանի հիւանդանոցն են մտել 185, մեռել են 100, առողջացել են 9. հիւանդանոցից դուրս մեռել են 177. Սամարայում հիւանդացել են 24, հիւանդանոցներն են մտել 22, առողջացել են 5, մեռել են 11 հոգի։ Սարատովում հիւանդացել են 15. հիւանդանոց են մտել 11, ընդամենը մեռել են 24 հոգի։ Ցարիցինում հիւանդացել են 66, առողջացել են 6, հիւանդանոցում և հիւանդանոցից դուրս մեռել են 40 հոգի։ Բաքուում հիւանդանոցները կրկին մտան 21, մեռան 18, առողջացան 5, հիւանդանոցից դուրս մեռան 30։ Ուզուն-Ադայում հիւանդացել են 27. Ասխաբադում 7, գաւառում 13։ Տաշկենտում հիւանդանոց մտան 31, առողջացան 8, մեռան 12 հոգի։

ՊԱՐԻԶ, 3 յուլիսի։ Ազգային ժողովը, չը նայելով եղանակի վատութեանը, շատ կենդանի կերպով անցաւ. քաղաքի բազմամարդ փողոցի տները զարդարված էին դրօշակներով. հայրենասիրական ցոյցեր արին Գամբետայի, Ժաննա դԱրկի և Սարաղբուրդի արձանների առաջ, որոնց պատուանդանների վրա պսակներ դրին. ոտնախմբութիւնն անցաւ խաղաղ. Դերուլէդ ճառ արտասանեց։ Լանդշանում կատարված զօրահանդէսը ժողովրդի ահագին բազմութիւն էր գրաւել։ Նախագահ Կարնօին՝ որը եկել էր գինուորական մինիստր Ֆրէյսինէի և գեներալ Մուրիբէլի ուղեկցութեամբ, ամբողջ ճանապարհի ընթացքում ամէն տեղ ողջունում էին։ Այդ մի և նոյն օրը, ինչպէս հաղորդում են հեռագիրները, այդ ազգային տօնը դաւառում կատարվել է աւելի ևս ողևորութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յուլիսի։ Ամերիկայի հիւրերը դիտեցին քաղաքի արժանայիշատակ տեղերը. վաղը կը մտնեն Պետերհոֆ. կիրակի նախաճաշ կը վնի Բօբրինսկու մօտ. ընծաների տալը տեղի կունենայ ամերիկական դեսպանատանը, ապա կերթան Մոսկվա։

ԿԱՏԱՆԻԱ, 3 յուլիսի։ Էտնա հրաբուխի արտավիժումը հետզհետէ սաստկանում է. գիշերը ստորերկրեայ խուլ թնդիւններ եղան. նոր ճեղք բացվեց։ Այժմ 18 ճեղքեր կան, որոնցից 9 գործում են. երկրի աղդաբնակութեան երկիւղը և վնասները օրից օր աւելանում են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յուլիսի։ Պետական քարտուղար Պոլովցով նշանակված է պետական խորհրդի անդամ։—Բժշկական դեպարտամենտի դիրեկտորը ուղարկված է հիւսիսային Կովկաս։—Յուլիսի 1-ին Աստրախանի հիւանդանոցը մտան 223. մեռան 130. առողջացան 17. հիւանդանոցներից դուրս էլի հիւանդացան 121. մեռան 134։ Սարատովի հիւանդանոցներում կան 40 հիւանդներ. էլի հիւանդանոց մտան 11, դուրս գնացին 2. մեռան 12. հիւանդանոցից դուրս էլի հիւանդացան 16. մեռան 13. Ցարիցինում հիւանդացան 90. առողջացան 10. մեռան 46. Սամարայում էլի հիւանդացան 23, որոնցից հիւանդանոց մտան 15. առողջացան հիւանդանոցում 8, մեռան 10, հիւանդանոցից դուրս առողջացան 4. մեռան 9. Բաքու էլի հիւանդանոց մտան 19, մեռան 20, առողջացան 13. հիւանդանոցից դուրս մեռան 37։—Ներքին գործերի մինիստրը կարգադրեց՝ դադարեցնել մասնաւոր յայտարարութիւնների տպագրութիւնը «С. Пет. Вѣдомости» լրագրում և արգելել դրա հատով վաճառելը։

ԿԱՏԱՆԻԱ, 5 յուլիսի։ Էտնայի ժայթքումը սաստկանում է. էլի նետվում են ահագին քարերը. լաւայի հոսումը դէպի Նիկոլօզ սպառնալի կերպարանք է ընդունում. մշակված տեղերը ամայանում են. Նիկոլօզի բնակիչները առ այժմ վտանգի ենթակայ չեն, սակայն աղդաբնակութեան մէջ անհանգստութիւնը սաստկանում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յուլիսի։ Որպէս զի Բօստովի (Դոնի վրա) վրայով խօլերան չանցնի Դոնի շրջանը՝ կարգադրված է, որ Նեվինոմեան կայարանի մօտ և Բօստովում (Դոնի վրա) բացվի բժշկական-զնմական կայարաններ՝ անցորդների համար։—Բօստովում (Դոնի վրա) և նրա շրջանում յունիսի 28-ին տեղի են ունեցել հիւանդութեան կասկածելի դէպքեր. մինչև յուլիսի 2-ը հիւանդացան 48, մեռան 13. Ազովում նոյն միջոցին հիւանդացել են 60. մեռել են 18. առողջացան 15. Գնիլովեան կայարանում հիւանդացան 13. մեռան 3։ Յուլիսի 1-ին հիւանդութեան 13 դէպքեր են եղել Վլադիկաֆկասեան գծի մի քանի կայարաններում՝ բանուորների շրջանում, որոնք եկած են եղել խօլերայով վարակված տեղերից, մեռան 4. տեղական հիւանդութեան ոչ մի դէպք չը կայ։ Յուլիսի 2-ին Բաքուում մեռան 43. Բաքուի նահանգի գաւառներում—65. յունիսի 28-ից մինչև յուլիսի 2-ը Անդրկասպեան երկաթուղու գծի վրա—17, Թուրքեստանում—29, և Անդրկասպեան երկրում—33։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յուլիսի 3-ին

Լոզոնի վրա 10 ֆունտ արժէ	. . 101 ր.	35 կ.
Բերլին վրա 100 մարկ —	. . 49 ր.	60 »
Պարիզի վրա 100 ֆրանկ —	. . 40 »	20 »
Ոսկի — — արժէ	. . 8 »	09 »
Մաքսայի կուպօններ —	. . 161 »	75 »
Արծաթ — — —	. . 1 »	08 »
Բօրսային դիսկօնտներ —	. . 4 »	5½ »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	. . 103 »	40 »
— — — — 2-րդ —	. . 103 »	12 »
— — — — 3-րդ —	— »	— »
— — — — 4-րդ —	— »	— »
— — — — 5-րդ —	— »	— »
— — — — 6-րդ —	102 »	75 »
6% ոսկեայ րէնտա	. . . . . 164 »	45 »
4% ոսկեայ փոխառութիւն	. . . . — »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	102 »	62 »
— — — 3-րդ —	104 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	235 »	25 »
— — երկրորդ —	222 »	50 »
Պետական երկաթուղային րէնտա.	104 »	50 »
5½ րէնտա	. . . . . — »	— »
4% Ներքին փոխառութեան	. . . 95 »	— »
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102 »	37 »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան դրաւ. թղթ. — —	. 192 »	50 »
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի	104 »	87 »
4½% դրական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկերութ. մեռալ.	. 153 »	50 »
— — — թղթադ.	. 102 »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	. 101 »	62 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	37 »
Օդէսայի — —	. 102 »	— »
Թիֆլիսի — —	. 98 »	75 »
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	102 »	50 »
— — Քութայիսի —	. 102 »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով տեղեկացնում է գիտութիւն ընդհանրութեան, որ երկու բնակարաններ են հարկաւոր Խարիուսի և Կուվիայի քաղաքային տարրական դպրոցների համար, մէկը 5-դ կամ 6-դ քաղաքամասում և միւսը 9-դ կամ 10-դ քաղաքամասերում։ Իւրաքանչիւր բնակարանը պէտք է բաղկացած լինի հինգ լոյս սենեակներից որոնցից, երեքը պէտք է լինեն մեծ, պէտք է ունենան խոհանոց, զաւիթ և ընդարձակ բակ։ Յանկալի էր, որ տունը առանձնացած լինի։ Տանտէրերի յայտարարութիւնները ընդունվում են քաղաքային վարչութեան մէջ մինչև յուլիսի 15-ը այս տարվայ։ 1—3

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ ՑՕԴՈՒՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԲԱՆԱԼԻ ԶՐԻ ԹԷՑԱՏՆԵՐԻ

Արշակ Ղոնդախսազեանց 3 ր., Ղազար Լաշխեանց՝ 2 ր., Յովհաննէս Թումանեանց 10 ր., Բէգլար Վարդանեանց 1 ր., Սարգիս Յարութիւնեանց 1 ր., Սանդրօ Խօջափարովեանց 1 ր., Գէորգ Հայրապետեանց 1 ր., Միխակ Վարդանեանց 1 ր., Յովսէփ Պապիեանց 1 ր., Ստեփան Դէմուրեանց 1 ր., Եագօր Դէմուրեանց 3 ր., Դաւիթ Աղբաչեանց 1 ր., Միքայէլ Երանոսեանց 1 ր., Գէորգ Զամոեանց 1 ր., Եագո Բոտիկեանց 1 ր., Հայ ոմն 1 ր., Գրիգոր Ղարագոզեանց 1 ր., Սանդրօ Անտոնով 1 ր., Գիորգի Զօրջաձէ 1 ր., Բէղաիձէ և Ամիրով 1 ր., Գէորգ Թաթուլով 1 ր., Արտեմ Ղալամքարեանց 1 ր. Դաւիթ Արեշեանց 1 ր., Յովսէփ Ափրիամեանց 1 ր., Ալէքսանդր Ցիցիկեանց 2 ր., Եղբարք Միլեանց 10 ր., Գէորգ Բէգլարեանց 1 ր., Արտեմ Ղարիբեանց 1 ր., Կարապետ Վարդանեանց 3 ր., Եագօր Խօջափարովեանց 1 ր., Սմբատ Տէր-Ադաքլեանց 1 ր., Դաւիթ Բարսեղեանց 1 ր., Ղալամեանց և Յարութիւնեանց 5 ր., Կոտինով 30 կ., Աւետիսեանց 1 ր., Բաշբէոք Մէլիքեանց 1 ր. 1—1

Թավրիզի Լիլաւայ թաղի համար հարկաւոր է մի վարժուհի կար ու ձևի կամ ձեռագործութեան և հայոց լեզուի համար և մի ուսուցիչ՝ ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։ Ցանկացողներին խնդրում ենք դիմել Յոհան Դաւթեանին, Միքայելեան փողոց, № 52, բնակարան Մատինեանցի։

(№ 75) 2—5

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սօլօլակսկայա փողոց, տուն Աղաբաբովի, Ամառնային գործնական հիւսուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկինների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար։

Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով։

Սարպինկայի գուլպաների թել, սադա, գոյնզգոյն։ Ներկերը տևողական են։

Սարպինկայի զգեստներ արկղներում 3 ռուբլուց սկսած մինչև 60 կոպէկ։

Սարպինկայի իւրկաներ 1 ր. 80 կ. և աւելի թանգ։

Սարպինկայի քթի աղլուխներ և գլխի թաշկինակներ։

ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԲԷՆԴԷՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ

(№ 47) 22—30

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձևի դասեր Գլօդշինսկու մեթոդով և Շեդզեր ֆրանսիական մեթոդով։

2) Կարի դասեր մոդային ժուրնալներով։

3) Հարթակարի և զանազան ձեռագործների դասեր։

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար։

Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան։

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի։ (№ 23) 37—40

Ծախվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
երկրորդ տպագրութեամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՌՔԸ

կոչված հայոց թագաւորների պատկերների ժողովածուն։

Գինը 1 ռուբլի։ Դիմել ՄՕՍԿՎԱ հայոց եկեղեցին հետևեալ հասցէով՝ Москва, Армянская церковь, г. Ивану Гечеву.

(№ 68) 3—3 (ե.)

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵՍԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մրթին դեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուվիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։

(№ 67) 7—100 (ե. շ.)

ԽՐԻՄԵԱՆ

կենսագրական տեսութիւն (պատկերով)

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ

Գտնել կարելի է զրավաճառանոցներում։ Գինն է 40 կ.։ Օտար քաղաքներից դիմել հեղինակին, „Մշակի“ խմբագրատուն։ (№ 45) 5—5

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ոյժի հասցնելը տարածութեան վրա.

ՏԵԼԵՖՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.

Էլէկտրական նշաններ.

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

Էլէկտրօլիզ,

Ակումուլատորներ, Էլէմենտներ,

ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.

Նախահաշիւներ և ծրագիրներ ձրիաբար.

(91—№ 5)

ԷԼԷԿՏՐՕՆ

ԳԼԷԲՕՎ եղբայրների

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա)

Մեծ Սադովայա փողոց, 24

РОСТОВЪ (на Дону)

БР. ГЛѢБОБЫ

Большая Садовая, 24.

ԳԱԶԱՑԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտոս սիստեմայի, որոնք իրանք իրանց են ուղղում ու օծում։

Գազի համար — ածուխից,

— — — նաւթից,

— — — անտրացիտից,

— — — կէրոսինից

½-ից մինչև 120 ձիու ոյժի։

Շոգեմեքենաներ մեծ արագութեան.

74—100 (ե. շ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Іюля 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.